մեծ ցաւ զգացի։ Ցեխոտեցայ եւ ճիգ անելով վեր կեցայ։ Ոչ ոք չկար։ Մօտեցայ պալատի դրան, ոչ ոք չկար։

Կաղալով տուն վերադարձայ։

Լուսաբացին ծաղիկներ էին ծախում։

* * *

Հիմա էլ պառկել եմ. ծովը օրօրում է։ Նորից, կոյր այն տեսիլքի նման, չօշափում եմ կեանքիս պատերը, դռների առջեւ կանգ առնելով։ Ու նոր մի պալատի սանդուխներով պիտի բարձրանամ։

Առաջին անգամ ես ինձ ներկայացայ մահուան առջեւ։

Մեռնողների սենեակները, մեծ այցելութիւնների խորհրդաւոր վայրերը, ճակատագրական ի՞նչ ձեւեր ունին։

Հայրս քանի օրից ի վեր, գլուխը կապած ճերմակ լաթերով, ուրուականի նման տան մէջ մաղ էր գալիս։ Իօդոֆորմի հոտ էր գալիս, եւ ես վախում էի նրանից։ Ջղայնացած, չարացած, փախչում էի պարտէզ, ծառերի վրայ բարձրանում, խակ նոերը ուրիշների բակը նետում։ Հայրս գալիս էր, փնտռում էր ինձ, կտրուած ձայնով կանչում էր եւ յուսահատ, իր տնկած վարդերի առջեւ երկար կանգ էր առնում ու մտածում։

Վերջին այդ երեք օրերը բոլոր իր մանրամասնութիւններով արիւնիս հետ ապրում են։

Հայրս ուժեղ մարդ էր, բարի եւ աստուածասէր։ Առաւօտները ամենից կանուխ նա էր վեր կենում։ Հագնւում էր, քառակուսի մեծ սենեակի անկիւնում երկար աղօթք ասում եւ իջնում պարտէզ։ Կէս ժամ մաղ էր գալիս, մինչեւ որ տնեցիներն եւ ծառաները արթնանան։ Վերադառնում էր, պատշգամի մեծ սեղանի առջեւ նստում եւ Աստուածաշնչի հերթական գլուխը կարդում։ Ընտանիքը ժողովում էր թէյի, եւ օրը սկսւում էր։

Հայրս սիրում էր պատմել։ Տասնվեց տարեկանից մինչեւ յիսուն տարեկան հասակը նա մասնակցած էր բազմաթիւ պատերազմների։ Կովկասեան լեռների վրայ, չերքէզների դէմ, լեզգիների դէմ, տաճիկների դէմ։ Սուրբ Գէորգ խաչի երեք աստիճանները ունէր, սուր եւ թագաւորի անձամբ ընծայած ոսկէ ժամացոյցը։ Գոհ էր։

Խորապէս քրիստոնեայ էր եւ հայ։ Ամէն բան ռուսից էր սպասում. յարգում էր իշխանութիւնը և ցարը։ Պատմում են, որ մի օր մեծ եղբօրս մասին — ուսանող Պետերբուրգում — ինչ որ բաներ է լսում։ Խառնւում է քաղաքական գործերին, գեներալ Լազերէվի տան, յեղափոխական մտքեր է յայտնել, Նարոդնիկների հետ կապ ունի... Հայրս, առանց ոչ ոքի բան ասելու, մեկնում է Բետերբուրգ, արտօնութիւն խնդրում Պօղոս եւ Պետրոս բանտերը պտտելու, իր զաւկի հետ։ Երբ բանտից դուրս են գալիս, եղբօրս աչքերի մէջ խիստ նայում է եւ ասում.

— Խելքդ գլո՛ւխդ ժողովիր։

Նոյն օրը մեկնում է։

* * *

Երկանի՛կ տարիներ պարսկական սաբսափներից յետոյ։ Հայերը բոյն էին որոնում։ Սրտերը, ծիծեռնակի թեւերի պէս սահում էին տանիքների տակ, «Հայրենիք սրբազան» էին երգում եւ մի քանի տարի յետոյ, Ադամեանի Համլետով հրճւում։

Գլուխը ճերմակ լաթերով կապուած ծերունին պտտում էր սենեակից սենեակ, իր տան բոլոր անկիւնների մէջ պրպտելով, երկարօրէն կանգ առնելով ամենաննչան առարկաների առջեւ։

Այս տունը իր պատմութիւնը ունէր։

Պարսիկ Խանի տիրապետութեան օրով հօրս մեծ հայրը շինած էր։ Մանկական ականջիս դարի խորքից սարսափի ձայներ էին գալիս եւ հրդեհների բոցեր էին բռնկում։

Շամախին, աղբիւրների եւ վարդենիների հմայիչ այս վայրը, մերթ ընդ մերթ, հրաբխային ցնցումների տակ, փշրում էր իր ողնաշարը ու մէջքը կոտրած վայր ընկնում։

Բնանեւ հինգ տարին մի անգամ սարսափը պար էր պարում, տաւարները մայում էին, տունները քանդւում եւ մարդիկ ահ ի բերան խենդութեան ծոցը նետւում։

Մի տարի չէր անցնում, ամէնքը նորից վերադառնում էին, եւ կլկլացող աղբիւրների տակ բիւլբիւլի եւ վարդի երգեր ասում։ Հողը մագնիսական էր եւ օդը կախարդ։

Ժամանակներ եղել էին, երբ տարերային քանդիչ ուժերին միացել էր Խանի կռացած սրի արիւնալի վտանգը։ Ճանապարհների վրայ, բիւլբիւլի տեղ, ագռաւներ էին թառել։ Բուն

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան